

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻԻԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal

«Ira vounk»

Varna

Гедакция На

Вѣстникъ

«Нравункъ»

Варна

Գրոշրի: 20 Լ. և 10 Լ.
տրոշիր

ՆՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

Նախարարապետ Հագգը փաշան և ներքին գործոց նախարար Թալաթ պէյ կարգ մը խոստումներ ըրած են մեր ազգային պատգամաւորութեան որ անցեալ շաբաթ օր անոնց ներկայացած էր Ս. Պատրիարքին վերադարձի մասին կարգ մը առաջարկներ ներկայացնելու և Կիլիկիոյ ոճրապարտներուն ներման տարաձայնութեան դէմ բողոքելու համար:

Նախարարապետին կանխաւ առնուած բերանացի խոստումներէն զատ՝ որոնք մեր ներկայ թիւի Կ. էլլին մէջ կը տեսնուին, հետեւեալ նոր խոստումները առնուած են:

Կիլիկիոյ ոճրապարտներուն ներումը յետաձգել:

Որքերու և այրիներու կրթութեան և անոնց աշխատութիւն հայթայթելու համար 20,000 ոսկիի գումար մը քուէարկել տալ: Իսկ Թալաթ պէյ խոստացեր է մէջ ալլոց օրէնք մը պատրաստել ջարդերու մասին, օրէնք մը որ պիտի ճշդէ չարիի պարագաներուն պաշտօնատարներուն պատասխանատուութիւնը և թալանի պարագային ժողովրդին պատասխանատուութիւնը ճշդող օրէնքներ ունենալ:

Եթէ թուրք վարիչներու խոստումները իրականաւոր չկատուին ներքին է, սա վերջին օրերու մէջ ստացուած խոստումներէն է՝ կարեւորները վերը ստորագծեալն են: ջարդի պարագային պաշտօնատարներու պատասխանատուութիւնը և թալանի պարագային ժողովրդին պատասխանատուութիւնը ճշդող օրէնքներ ունենալ:

Քանի որ խոստումներու վրայ հիմնուելով իր Աթուրք պիտի վերադառնայ Ս. Պատրիարքը, որ անկէ հեռացած էր Հիլիփ փաշային խոստումները չիրականանալուն պատճառաւ, պէտք է որ հայ ազգին սպառնացող տեսական չարիքը ջարդը ու թալանը խափա-

նելու բնոյթ ունեցող վերջին խոստումները հաստատ հիման վրայ դնելու համար գերմարդկային ճիգեր թափուին հայ ազգը ներկայացնող մարմիններուն կողմէ:

Յայտնի է թէ՛ ուր և երբ որ ջարդ տեղի ունեցած է ուղղակի կամ անուղղակի պաշտօնատարներու մեղսակցութեամբը եղած է, վասն զի պաշտօնատարները իսկական պատասխանատուութենէ չեն քաշուած են միշտ, ինչպէս Կիլիկիոյ պաշտօնատարներն ալ, որոնց միայն քանի մը տարի պաշտօնադրութեան վճիռ մը բաւ համարուած է: Նոյնպէս ուր որ թալան եղած է առանց ջարդի չէ եղած և թալանող-ջարդող իսլամ խուժանը և իրենց գիւղակից ու մեղսակից իսլամ ժողովուրդը անպատասխանատու ճանցուած է և անարգել վայելած է թալանուած իրերը: Այս անպատասխանատու թաղուիլն է որ անոնց ախորժակը սրած է նոր թալաններու ու ջարդերու մասնակցելու համար: Չարիքի բուն արմատը ահա հոս է:

Թալաթ պէյի խոստումը եթէ անկեղծ է, Կիլիկիոյ ազէտէն ի վեր իրաւունքի և Հայրենիք օրաթերթի պահանջն է այդ աշխիքն բուն չարիքը արմատախիւ ընելու համար, թալանի մասնակցողներու գիւղակիցները կամ համայնքները պատասխանատու բռնել, քննարկ անոնց տուեալ տալ:

Մեր Ազգ. Երեսփ. ժողովրդ, վարչութիւնը, Պատրիարքը և հայ մէպուսները պէտք է որ իրենց բոլոր ազդեցութիւնը իգործ դրեն թալաթ պէյի խոստացուած կոտորածի և թալանի դէմ համեմալ պատասխանատուութեան օրէնք մը քուէարկել տալու համար Օսմ. Խորհրդարանին: Սա՛ն գոյաւ ձօն:

Յ. Պարպիք

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը օրհնութեան կոնդակ մը շրկած է Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան:

Ամերիկայի մէջ նոր մասնաճիւղեր կազմուած են յիշեալ Միութեան:

—Մերսինէն կը հեռագրեն Յունվար 16 թուականաւ «Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը երկու օրէ ի վեր հիւանդ պառկած է և Ատանա չի պիտի կրնայ երթալ:

—Կիւրիւնէն նոյն թուականաւ հեռագրուած է թէ սովը կը շարունակէ ձմրան սուրիւ անգործութեան մատնուած աղքատներ և որքեր նմանը չը տեսնուած հացի կարօտ խեղճ ու կրակ վիճակի մը մատնուած են և անմիջական նպաստ կը խնդրեն:

—Քիլիսի Հայոց, Յունաց և հայ Բողոքականաց հոգևոր պետերը հաւաքաբար հեռագրած են Պատրիարքարան թէ «հին ունեւորներ անգամ հաւասարութեան սկզբունքին համաձայն քեֆիքի ժողովներուն կանգամակցէինք: Օսմանադրական ունեւորներ ատեն սակայն՝ Իտալիի ժողովի անդամաց ընտրութեան առթիւ չի հրաւիրուեցանք և կառավարական պաշտօնեաներէ բաղկացած մարդիկ անգամ ընտրուեցան: Ասոր պատճառը մեզ անբացատրելի է՝ իրաւունքի հաւասարութիւն և այն ընտրութեան շնչումը կը պահանջենք:»

Տարտանէլի Հայոց հոգևոր պետը ևս նոյն իրաւունքի մասին կը հեռագրէ ու կըսէ թէ թէպէտև մինչև հիմայ տեղւոյն իտալիի ժողովին անդամակցեր է, բայց Պոլսէն եկած հրամանի մը վրայ՝ ասկէ վերջ տեղւոյն բոլոր հոգևոր պետերուն արգելուք է ժողովներու մէջ գտնուիլ:

Խօսքով ու գիրով հաւասարութիւն հռչակող ժէօն թիւրքերը գործնականին մէջ Համիտին օրերն իսկ փնտաւել կուտան:

—Մուշի առաջնորդարանը տխուր գոյներով կը նկարագրէ

լքեալ կիներու դառն վիճակը, և կը խնդրէ՝ Պատրիարքարանէն որոշում մը տալ այս մասին՝ որովհետև զանցառութեան պարագային ծանր հետեւանքներ կը գուշակուին:

—Վաղարշապատի մէջ Պ. Կ. Նատրեան իր հարստութիւնը կտակեր է ազգային պանդան հաստութիւններու, ներսէսեան գպրոցին և Ուրմիայի Հայերուն իսկ իր հարստութեան հարկերն 10ը էջմիածնի վանքին, որպէս զի վարժարան մը շինուի Խորմեան Հայրիկի անունով:

—Կրէտէի փոքրածիւ հայ գաղութը 140 ֆր. հաւաքելով, Ատանայի կարօտելոց համար, Պատրիարքարան շրկած է:

—Կովկասի մէջ երկրագործական ուսումնարան մը հիմնելու խնդիր կայ այսօր կովկասահայոց մէջ:

Այդ տեսակ գպրոցի մը համար հարկ եղած գումարը արդէն յատկացուցած է ծանօթ բարերար Ալ. Մանթաշեան: Բայց բաւրբարը ազգին կամքին և մասնագէտներու ընտրութեան ձգտած է հիմնուելիք ուսումնարանին տեղը որոշելու և ծրագրեր մշակելու խնդրել:

Հայ մամուլը և կուլտուրական ընկերութիւնները կը զբաղին այժմ տեղը որոշելու խնդրով, կովկասեան մէջ մի գառառ կուզէ նոր հիմնուելիք գպրոցը իրեն մէջ ունենալ: Այժմ վիճաբանութեան առարկայ են Ալէքսանդրոպօլը, Երևանը, Վաղարշապատը, Օշականը և Աշտարակը: Տակաւին յայտնի չէ թէ անոնցմէ որը բաղդը պիտի ունենայ երկրագործական ուսումնարանը իրեն քով ունենալու, որպէս զի առաւելապէս այդ գառառի նոր սերունդը կարենայ օգտուիլ անկէ:

—Կարգ մը տղոց կողմէ Յոյս ընկերութիւն անունով ի նպաստ Աղգ. Հիւանդանոցին կատարուած վիճակահանութեան հասոյթը կորսուելու վտանգին տակ է: Տեղւոյս Թաղ. Խորհրդոյ ուշադրութիւնը կը հրաւիրենք:

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՊԱՏՃԱՐԱՐԱՆԵԱԼ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

«Առաջնայի քառասունի արկածէն առաջ վանքի եւ եկեղեցապատկան կալուածոց մասին տասներեք տարիներ առաջ իսթիպատի օրով Շուրաբի Տէօփէթի տուած ապօրէն որոշումը գործադրութեան դնելու փորձերը պարտաւորեցին զմեզ հրաժարականն իստուցանել ինչպէս բարեխնամ կառավարութեան, նոյնպէս Ազգ. Պատրիարքարանին: Մեր հրաժարականի ինչորեք տակաւին լուծման մը չը յանգած ծանօթ եղբարկան զէպքը վրայ հասաւ իբրեւ բնական հետեւանք. մարտ 31-ի անժողովի ղէպքին:

Մենք մոռնալով մեր հրաժարականը եւ առիթ եղող պատճառը յօգուտ Հայրենիքին եւ իսթիպատութեան ջանքերուն հայ ժողովուրդին շարունակեցինք պաշտօններ իբրեւ հրաժարեալ սպասելով սահմանադրական կառավարութեան ի գործ դնելիք անաչառ եւ անկողմնակալ արդարութեան:

Հինգ ամիսներու մէջ կեանքէն ինչքէն տուէն ու տեղէն եւ պատիւէն զերկուսնները իսպառ յաւաքել ակընկալուած արդարութենէն եւ մինչեւ հիմայ մեր շաղկապ սրտապիղծ խոստումներէն, այլեւս չեն հաւատար ոչ խօսքի եւ ոչ խոստումի եւ ծայրայեղ միջոցներու, ու խմբովին ջուրը թափուելու սեւ խորհուրդներու մէջ միութարութեան գտնելու կը մղուին: Ժողովուրդը այս ամբողջ եւ անքնա-կան կացութեան չմտնելու համար յաճախ ուշադրութեան հրաւիրեցինք տիրող անտարբերութեան դէմ եւ անմիջական արդարութեան պահանջները բայց հակառակ մեր հայրենասիրական արդար պահանջներուն, հակառակ անկեղծօրէն սահմանադրասէր եւ լուսամտի թուրք հայրենակցաց այլա-տարր Օսմանցիները ուր ոչ եւ համերայութեան մէջ պահելու հայրենասէր գաղափարին եւ ջանքերուն փայտի բերդին վրայ յայձակող քրտառնեայ բերդարդեւները չարող եւ թուրք ոմրագործները սգաւ արձակողները, շատ տեղեր պետական զինարանները գրաւող ու կողոպտողները այնքան չեն հետապնդուեցան, որքան սոսկ ա՛ն ձապալապալութեան դիմող հայերը բանտերու եւ երկար պայմանաւորութեան թերթարգելութեան զատապարտուեցան: Թունայից հրատարակութեամբ, ձերմակ փաթեթներու ստոր-նամուտ թեւամբ խաւանի անդուստ մոլեղնութեանը զրդողները, ապա-ցուցեալ ոմրագործներ, տասնով, քսանով անմեղներ փողոտողներ, անմեղ մանուկներ կրակի մատնողներ, հայա-տեցութեան ին արդարութեան Առեւանդներու մէջ խոստովանողներ, Բ. Դրան եւ Սորհրդարանի զրկած անկողմնակալ քննիչներու տեղեկագրով յանցապարտ եւ հաղարաւորներու արեւան պատճառ եղողները անմեղ հրա-չակուեցան կամ օրինաց մեղմացուցիչ արտադրութեանց ենթարկուեցան: Միլիոնաւոր բանակներ արժող կողոպտուողներուն մէկ տասնորդն անգամ չի վերադարձուեցաւ եւ կառավարութեան ձեռքով տուներէն կողոպտուողներ հանուելով մէկտեղ պատասխանատուութեան չենթարկուեցան կողոպտիչները, իսկ այս ամենուն հակառակ ղէպքի ժամանակ հաղարաւոր կեանքներ փրկուողները, աշաղթութեամբ կողոպտուողները հետզհետէ պաշտօնանկ եղան: Առաջնայի Առաջնորդը ղէպքի

պահանջ վիճակէն բացակայ ըլլալով մէկտեղ զկեանս բերդարգելութեան զատապարտուեցաւ, զանազան առաջնորդներ եւ քահանաներ անհիմն կասկածներով առանց մեր գիտութեան եւ առանց յարգելու կայս. պէրաթով մեզ եւ Պատրիարքներին տուած առեւանջանքներու մեծութեամբ թանտարկուեցան ժողովուրդի անդորրութեանը անձնու իրաւար պահպանող եւ տեղական կառավարութեան հետ օրինասահման յարաբերութեան ընդունելը անմիջական իրենց պաշտօնա-տեղիներէն վերցնելու հրամաններ տրուեցան:

Իրաց այս կացութենէն մենք ալ ժողովուրդին չափ յաւաքել եւ բոլոր ուղին հողէն հողներէն հեղինակութեանը կորուստ կախակայեալ պաշտօններ իսպառ անօգտ տ եւ հասարակութեան վրայ բեռ մը համարելով, քանի որ ի վիճակի չէ կաթողնոյ եւ կաթողի-կոսարան պահելու. վերջնականապէս կը հրաժարինք նաեւ յայտարարելով, որ այսուհետեւ նոր կաթողիկոս ընտրելու պէտք մ'ալ չենք տեսնել: Կի-լիկիոյ հայ ժողովուրդը կրնայ հոգեւորապէս միութարութիւն Պատրիարքարանի վիճակայնոց նման էջմիածնի կաթողիկոսին հոգեւոր իրաւասութեանը ճանչնալով եւ ընդունելով:

Հաճեցէք ներկայացնել նորին Կայս. Վեհափառութեան եւ ընդունելութեան միջնորդ հանգիստնալ եւ այսու ազատելով զմեզ բերաւոր ալիքներու եւ որբերու անդարմանելի կացութեան ահաւոր պատասխանատուութենէն, պարտաւորած պիտի ըլլանք մնալ ցկեանս հաւատարմ Սոմ. Գահուն եւ Գահակալին եւ մշտնջենաւոր:

Ազգ. Պատրիարք
Հր. Սահակ Կարողիկոս Կիլիկիոյ

ՔՐԴԱԿԱՆ ՎՏԱՆԳ

Նախնիքն անէն (Դարսի նահանգ) Մշակի կը գրեն յուշարձն թուականաւ: Բիւրդ. Հիւսէին փաշան, որ յայտնի է առհասարակ քիւրդական աշխարհում մասնաւորապէս էրզրումի նահանգում, իր ցեղի մէջ մեծ հեղինակութեան է վայելում: Նա վերջերս իր հետ է վերցրել 300 զինված քիւրդերի եւ փախել Պարսկաստան թիւրք-պարսկական սահմանադիւտային շըրջաններում ապրող քիւրդական ցեղերի—Կիլան, Միլան, Շիկակ, Թագուր, Հոյդարցի եւ այլն—չըջանում պրպագանդա մղելու համար:

Հիւսէին փաշայի նպատակն է համաքիւրդական ապստամբութեան բռնկեցնել ընդդէմ օսմանեան նոր իրաւակարգերի, որովհետեւ նա խորապէս զգում է, որ սահմանադրական կարգերը եթէ արմատանան թիւրքական կառավարական կեանքում, այդ դէպքում քիւրդերի աւազակային ինտիմիտներին ստիճ գրվելու է:

Այդ քիւրդ փաշան, ինչպէս յայտնել է մասնաւոր խօսակցութեան իրենցին, չարժուծ է մի նախագիծ վաղ պլանի համա-ձայն եւ յոյս ունի Արաբիայից օգ-

նութիւն ստանալու թէ մարտիկներով եւ թէ ազգամթերքով: Այդ նկատմամբ արդէն մի քանի ամիս սրանից առաջ յիշեալ փաշան իր մօտիկ ազգականներից Ալի եւ Մահմէդ բէգերին ուղարկել է Ադէն արաբական յայտնի ցեղապետների հետ բանակցելու համար:

Ի հարկէ հայց է լի՛ք կարգա-րանա՛ն արդեօք Հիւսէին փաշայի ցանկութիւնները, բայց փաստ է այն, որ նրա մշած պրպագանդա չափազանց պարարտ հող է գտնում թէ թիւրքիւնքի եւ թէ Պարսկաստանի քիւրդական շըջաններում:

Ձը մոռանա՛մ հաղորդել եւ այն, որ պրպագանդա է մղվում եւ Անդրկովկասի շըջանում ապրող քիւրդերի մէջ, եւ այդ նպատակով յատկապէս եկել էր Կարսի շըջանը շէյխ—Մահմէդը, որ դըրացին է էյիպ փաշայի որդի Բասուլ բէգի:

Ի վերջոյ ասեմ, որ ստացած տեղեկութիւններից երեւում է որ քիւրդական ապստամբութեան արտայայտվելու է նախ եւ առաջ թիւրքահայերի վրա յարձակվելով ու կոտորելով նրանց:

Հօլօ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ան Արթ. Տէր Սարգիս քնն. Դարիպեան նախագահ Ազգ. Թաղ. խորհրդոյ վառնայի

Որպէս յայտնի է ձեր Արժանապատուութեան քաղաքիս հայ հասարակութեան կազմանէ ընտրուած էինք անդամք թաղական խորհրդոյ:

Հպատակելով ժողովուրդին կամ քին ու փափաքին, ընդունեցինք մեզ եղած հրաւերն ու ձեռնարկեցինք պաշտօնավարութեան, միակ սկզբունք ունենալով ազգին շահերն աւելի պաշտպանել քան անձնական հաշիւներն, յոյս ունենալով նաեւ թէ՛ մեր յարգոյ անդամակիցներն ալ նոյն ուղղութեամբ պիտի ընթանան. բայց ցաւք տեսան մեր տասն ամսուան պաշտօնավարութեան միջոցին թէ Խորհրդոյս անենապետ կարգըւած անձը Տիւր Ս. Գանարեան, իւր պաշտօնավարութեան սկիզբէն իսկ սկսեց կատարել բոլորովին ապօրինի կարգադրութիւններ, որոնց մի քանին նշանակուած պիտի տեսնէք ի ստորեւ, եւ հաւանակ մեր կողմանէ մի քանի անգամներ իրեն ուղղուած բանաւոր եւ խիստ ազդարարութիւններու, նա շարունակեց իւր այդ քմահաճ կարգադրութիւնները, նիւթական եւ որ աւելի ցաւալի է, բարոյական վնասներու պատճառ ըլլալով քաղաքիս հայու-թեան:

Ա.—Պարոն Ատենապետ առանց խորհրդոյս հաւանութեան ինքնազուլս վարձեց ուսուցիչներ: Բ.—Ձեռք գիտեր ինչ հաշիւներով պուկարերէն լեզուի ուսուցչուհի մը վարձեց աւելի տարեթոյա-կաւ եւ պակաս հմտութեամբ, երբ իրեն ցոյց տրուեցաւ աւելի կարող մը եւ պակաս տարեթոյակով գոհացող ուսուցչուհի մը:

Գ.—Հաւանակ խորհրդոյս որոշման արտասահման գտնուող ուսուցիչ պարոն Մաքսուտեանին երկրորդ անգամ 100 ֆրանք զրկեց, որ հազիւ կրցաւ Ձ ամիս ետքը հասնիլ եւ պաշտօնին անցնիլ:

Դ.—Առանց խորհրդոյս հաւանութեան, ուսուցիչ պարոն Նիկոլին տարեթոյակը աւելցուց 100 ֆր. առարկելով թէ՛ միւս ուսուցիչներուն տարեթոյակին հետ հաւասար ըլլալու համար կարգադրուած է եղեր այսպէս, մինչդէռ պարոն Նիկոլը տեղեկութիւն անգամ չուներ այս յաւելումէն:

Ե.—Առանց խորհրդոյս հաւանութեան ստանալու միմիայն մը սալաճառ Գալուստի բարեխօսութեամբ պաշտօնի կոչեց մանկապարտեզպանուհի ա՛ռուս տակ բացարձակ անկարող աղջկան մը չունենալով իսկ դպրոցական վճարադիր մը ի ձեռին, եւ անցուց զայն պաշտօնի լիութնայակ վարձեալ քաջ գիտնալով որ աւելի կարողներ պակաս տարեթոյակով պատրաստ էին պաշտօնավարել:

Մենք, անդամք թաղական խորհրդոյ, բնականաբար չէինք կրնար անտարբեր մնալ պարոնին այդ սղջալնաս կարգադրութիւններուն թէպէտեւ իսկ բաւական յանգեցնելու ունեցաւ առարկել թէ ինք պարզ անդամէ մը աւելի իրաւունք ունի եղեր ինքնազուլս կարգադրել խնդիրներ եւ տեսակ տեսակ դարձուածքներով ինքզինքը անպարտ ցուցնել, առանց հասկնալ ուղեւու թէ, սահմանադրական կառավարութեան մը տակ ապրող սահմանադրական ժողովուրդի մը ընտրուած ներկայացուցիչները հաւասարապէս ձայն ունին ժողովի մը մէջ խնդիր մը լուծելու ատեն:

Ազգ. գործերու այսպիսի անձի մը կողմանէ կատարուած քրմահաճ եւ ինքնազուլս կարգադրութեանց գէ՛մ լուռ մնալն մեղ-սակից ըլլալ սեպելով՝ ուրիշ միջոց չ'է մնացած մեզ բայց եթէ մեր սոյն բողոքախառն հրաժարականը տալով քաշուիլ թաղա-կանութենէ, գոնէ ապագային աղատ մնացած ըլլալու համար թէ մեր խղճին եւ թէ Ազգին առջև:

Կը խնդրեմք ներկայս հաճեցէք հաղորդել թաղական խորհրդոյ յարգոյ անդամաց անոր մի օրինակն ալ զրկած ենք լը՛

բազմաթիվ զինվորներն ի վեր յարգեցին ի իրենց զինվորներին:

Մեծագույն յարգանք
Կարապետ Աճեմեան
Արարիկ Գալստի
Կարապետեան

Վառնա 16 յուն. 1910

Դիմ. Խնդ. — Տ. Գալստի, ես կըսեմ թէ ինչ նոր տարիքն է ի վեր հրաժարած է. Կեանքս քանի պատճառ ունի. Լավ այս երկու անգամ ցը հրաժարիլը աւելորդ է այլեւս՝ միայն կը մաղթենք որ միւս վեց անգամներ անթերի գործելով Տ. Գալստիէն բացառկայութիւնը զգալի չընեն:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ԶՈՒԺԱՐԻ

Խնդիրը

Ներդրում ԿԵԼԻԿՈՅ ՈՒՅՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

Անցեալ ուրբաթ օր Խառն ժողովը նիստ ունեցաւ Ս. Պատրիարքի տանը մէջ: Այդ նիստին մէջ վարչութեան ատենակցի Ազարեան էֆ. բացատրութիւն տուաւ թէ Պատր. հրաժարականի խնդիրը լուծելու և Ս. Պատրիարքին վերադարձը դիւրացնելու համար սա առաջարկութիւնները եղած են կառավարութեան:

- 1) Կառավարութիւնը իր ծախքով չինէ ազգային պահուստը և Գալստիները:
- 2) Դրամագումար տրամադրուի, որպէս զի կարելի ըլլայ Ատանայի այրի կիներու գործ հայթայթել և դիւրացնել անոնց ապրուստը:
- 3) Կառավարութիւնն որբերուն ապրուստին և դաստիարակութեան համար պէտք եղած ծախսերը վճարէ 5 տարի:
- 4) Մահիւն մնացած հոգերը իրենց

մօտաւոր ազգականներուն տրուին, 5) Գալստիներու մէջ յափշտակուած կամ սպառնալիքի տակ ձերբազերծ հոգերն ալ իրենց տէրերուն դարձուին:

Վարչապետն այս առաջարկութիւններէն անոնք որ կառավարութիւնն անմիջապէս կրնայ գործադրել, խոստացած է զլուսն հանել, իսկ անոնք որ երեսփ. ժողովոյ որոշման կ'կարօտին, խոստացած է անոր ուշադրութեան յանձնել, միանգամայն ըսելով որ արդէն Անատոլիոյ մէջ յափշտակուած հոգերն իրենց տէրերուն կը վերադարձուին հետզհետէ, և այդ պատճառաւ կուսակալներու և կառավարչներու դէմ դժգոհութիւններ կ'ծագին անոնց կողմէ որոնց շահերը կը վտանգուին: Կառավարութիւնը խոստացած է ոյժ տալ կուսակալներու այս ձեռնարկներուն, իսկ բռնութեամբ ձերբազերծ հոգերուն համար ալ նոր քննութիւն մը պիտի ըլլայ:

Ազարեան էֆ. ի այս յայտարարութեան վրայ Ս. Պատրիարքն համաձայն գտնուելով Վարչութեան առաջարկներուն, կրկնեց դարձեալ թէ ինչ պաշտօնին ձեռնարկած պահուն ասոնցմէ կարելի է իրականացած պէտք է ըլլան որ այդ համարձակութեամբ վերադառնալ:

Այս մասնակի գոհացման լուրին անմիջապէս յաջորդող հետեւալ լուրը իր խորհրդածութիւններով զղիւխի տպաւորութեան մը տակ կը ձգէ զմեզ: Ատանայէ առաջարկուելէ որ տեղւոյն պատերազմական ատեանին վճռով դատաւարտեալ կարգ մը ոճրագործներու ընդհանուր ներում շնորհուի, որովհետեւ եթէ

ասոնք երկարատեւ 10-15 տարի մնան բանտերու մէջ, իրենց պարագաները վրէժխնդրութեան ոգով լեցուած կ'ըլլան Հայոց դէմ և երկրին մէջ բազմացուած համերաշխութիւնը չի գոյանար: Երկու տարբեր միշտ խելիւ և ատելութեամբ լեցուած կ'մնան: Մենք չուզեցինք հաւատ ընծայել այսքան անհաւատելի լուրի մը, որովհետեւ պատերազմ. ատեաններէն դատաւարտուած 'ոճ' բանտերէն դատաւարտուած 'ոճ' բանտերէն, Կիլիկիոյ մէջ ամէնէն աչք ծակող խժգոնութիւնները գործողներն էին, որք եթէ խիղճ և մարդկային զգացում ունենային հեռու պիտի մնային այդ ոճիրներէն, ինչպէս ուրիշ աղետամիտ թուրքեր ոչ միայն չարիք չգործեցին այլ և Ատանայէ, Հաճըն և Սիս մարդկային կեանքեր փրկեցին որոնց մէկ քանիին վրայ խօսուած և իրենց անուններն ալ թուած էին նախընթաց օր: Եթէ կ'վախցուի որ ասոնց բանտարկուելով իրենց պարագաները Հայոց դէմ չարիք պիտի գործեն, ասոնք բանտէն արձակուելով, այդ չարիքն ուղղակի իրենք պիտի գործեն, աւելի քաջալերուած, համարձակութիւն առած, որովհետեւ պիտի հասկնան թէ իշխանութիւնն իրենց նպատակներն է և աններելի ոճիրներէ կրցան արդարանալ քանի մը ամսուան բանտարկութեամբ: Հապա Կիլիկիոյ Հայ ժողովրդեան երկիւղը, սարսափը ինչպէս զսպելու է, երբ դեռ 5—6 ամիս առաջ իբրեւ մեծ մարդասպաններ բանտ նետուողներն այսօր արձակ համարձակ պատին փողոցները: Ասոր օրինակը կը տեսնուի Անթիոյ մէջ, ուր պատերազմ

մական ատեանէն դատաւարտուածներ կը պոտին համարձակ և Անթիոյ այրի կիները զարհուրած, սարսափած, իրենց տուններն իսկ դարնալ քաջութիւն չունին: Այս ներումը Ս. Պատրիարքը չէր կրնար խնդրել արդէն, որովհետեւ իր հրաժարականն յանցաւորներուն պէտք եղած կերպով պատժուած չըլլալէն յառաջ եկած էր ինչպէս կարելի էր հիմա ուրիշ պատժուածներուն ար. ձակման համար միջամտել: Մենք այս խօսքերն իբրեւ պարզ զրոյց կ'նկատէինք և չէինք ուզեր հաւատալ, բայց երէկ ճշշուեցան և Խառն ժողովոյ մէջ ալ խորհրդակցութեան արարկայ եղան: Եկեղեցական անդամք մասնաւորապէս բողոքեցին այս մտադրութեան դէմ: այնպէս ընդունելով որ չարիքը փոխանակ սահմանափակելու, կ'ծառայէ աւելի ընդարձակելու: Պատգամաւորութիւնն այսօր այս իմաստով պիտի խօսի եպարքոսին, առաջարկելով որ եթէ գործիք եղողներ և թեթեւ յանցաւորներ ներուին, ազատ մնան այս ներումէն ոճ' բանտերէն, ինչպէս նաեւ ձեւ վատ, Մուսթաֆա Բեմալի, Ասաֆ, Իհսան Ֆիքրի, Պօշնաք Օալիհ և Ապտ-իւլ Գատէր:

Ս. Պատրիարք Հայրը կ'առաջարկէ որ իր Աթոռը վերադարձած օրը՝ անմիջ կերպով դատաւարտուած Հայոց ներում շնորհուի, «Բիւզալմիլիոն»

Մենք կը կարծենք որ այս ներման զրոյցին հեղինակ ժէզնութիւնը զօմիթէն է, որուն համակարծիք է հազար փսջան ալ:



ԹԵՐԹՈՆ «ԻՐԱՆԻՈՒՆՔ»

ՈՂՋԱԿԻՋԵԱՆ ԽՕՍԵՑԵՈՒՆԵՐ

Ա.

Սերժ. Աշխարհային վաղաճուկ եւ քանկութեան անեմաֆազն է երեւալ կեդրոնական երկու հաւասար մտաւորական բարձրութիւն ունեցող առաջինի արեւի մէջ: Հակառակ պարագային, նա քունաւորիչ է և սկզբնականապէս ապահովութեան:

1889 Հոկտեմբերի վերջերս էր, երբ անձրեւային օր մը կը ճեմէր քաղաքիս Արեւելեան մասին մէջ, իմ վաղամեռիկ քրոջ սուգի եւ կսկիծի մէջ թաղուած: Կարծես քրոջ աշխարհ մութ. սեւերով էր ծածկուած, մի խօսքով ես կանցնէի փողոցներէն զիւրիկոր առանց դիտելու թէ ուր կ'երթայի եւ ահա այդ միջոցին էր որ յանկարծ ձայն մը հնչեց ականջիս: Պահ մը բոլորովին զիտելէ վերջ նշարեցի մի գիւղական կ'ուր քան քաջ հեռու որովհետեւ վրայ կեցած, մի ձիով լուծուած: Որի երկվարները քնած էր մի տարիք: Եւ զառամեալ մարդ որ իւր զոյժով ունեւոր կը գլխակար դէմքով, կատարեալ կմախք մը ներկայացնէր: Մօտենալով իրեն ձեռքը թոթուցի, բարի գալուստ մաղթելով:

Այդ իմ ազգականն էր, Նրա կոխքին նստած էին մի կին եւ մի դուռնի օրիորդ, փաթաթուած գլուխներով, որոնք երբէք չէին ձանաչեր, եւ սակայն նրանց ձեռներն եւս թօթուելով խօստացայ իմ ազգականին երկոյան զնալ իրենց տունը: Եւ հեռացայ:

Շատ տարիներ անձնը էր այն օրէն երբ իմ այդ ազգականն չէի տեսնուի, եւ արդէն շատ ալ սիրալիր տրամադրութիւն չէր կարող լինել մեր մէջ իրար տեսնելու փափաքը: Թէ ինչ պատճառներով, Այդ շատ պարզ պիտի տեսնէ յարգելի ընթերցողը իմ վէպի շարունակութեան մէջ:

Երեկոյն մութը կոխած էր երբ արդէն կը գրտնուէր եւ իմ այդ ազգականին տունը: Ընթերցողը կարող է երեւակայել որ նոր փոխադրուած տուն մը ինչ գրաթեան մէջ կարող է ըլլալ: Կա՛ն կա՛ն սեք իրարու վրայ դիզուած: Միայն մի քանի աթոռներ կը մնային տրամադրելի նստելու:

Իմ ազգականն տարիներէ ի վեր գիւղական խանութպան ըլլալով վերջին օրերս, իւր գործը թողնելով քաղաք կը փոխադրուէր եւ այս պարագային մենք երկու եղբայրներս մեր ազգականին հետ վարձած էինք մի տուն որի մի մասը նրանց իսկ միւս մասն ալ մեզ տրամադրելի: Եւ սակայն մենք պարտաւորուած էինք մի շարք վերջ փոխադրուելու:

Եւ մենք հաւաքուած երբ որուայ ձանապ հորդութեան եւ այլ խնդիրներ վրայ կը խօսակցէինք: Իմ քրոջ ուշադրութեան առարկայ եղողը ոչ ալ ինչ էր, բայց իրէ դեռաւոր օրիորդը որ իմ ազգականի քենին էր:

Օրիորդը որ տասն եւ ութ տարեկան էր ուն աչքերով, կէս գանգուռ մազերու տակ լայն ճակտով բոլորակ երեսին վրայ կարմիր այտեր եւ իւր վախելու հասակով հմայիչ էր:

Իւր մի նայուածքը արժէր հազարներ, սիրոյ բոց մ'էր որ կը ժայթքէր իր աչքերէն: Մէն մի շարժում եւ մէն մի նայուածք կարծես հոգեւոր թելերը կը թռտայնէր: Տարօրինակ էր տեսարանը, յափշտակուած էի: Ռոպէական տրամադրութեան տակ անչէլ հրով վառուած սիրահար մ'էի: Մի խօսքով այդ իմ Անահիտն էր:

Եւ անկասկած որ այդ արամքոյ կարգի սէրը՝ մի տարօրինակ զի թիչ տպաւորութեան տակ առաջացած էր: Թէ ինչպէս, օրիորդին շարժումը եւ մէն մի նայուածքը՝ ցոյց կը տար որ ինձ համակրող մ'է, թէ՛ զիս սիրող մ'է: Եւ ահա՛ այդ էր՝ որ հրապուրած եւ դիմած էր զիս: Թէ՛ որքան իրաւացի էր իմ նկատողութիւնը այդ շատ պարզ պիտի տեսնէ ընթերցողը՝ միայն թէ ես չ'էի կարող այժմէն իսկապէս մի որոշ գաղափար տալ այդ մասին:

Կէս գիշերը անցածէր եւ ակամայ հրաժեշտ առնելով մեկնեցայ խոր մտատանջութեան տակ ընկող մ'է:

Թէ ինչ կը պատահէր, արդ'եւ մի երազ թէ՛ իրականութիւն: Եւ մեն պարագայի տակ եւս սիրոյ դառն քաժակի կարիքով քունաւորուած էի: Բոլոր գիշերը անքն, տանջանք մէջ մնալով չ'էի կարող մի կերպով միջամտել:

(Շարունակելի)

Հ. ՀԱՅԻ-ՎՐԴԱՆԵՍ

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԻՔԻԱ

Կիրիտ մէսէլէսինտէն տօյալը
Եռանաստատուն վէ թուրքիա պէյ-
նինտէ Ենիսէն պիր մուհարէպէ
ալըլաճագ կէօրիւնիսօր:

Եռանաս իթթիհատը ասքերիէ-
սի թէհտիտաթլէ դապիւնէյէ Իս-
թիֆա իթթիւրուպ՝ մէճլիսի Ու-
մուսի թէճէմմին իթթիւրմէք
շարթը իլէ Ենի պիր դապիւնէ-
նին թէշքիլինէ մուվաֆագ օլ-
մուշտըր:

Իշպու մէճլիս Ումուսի գանուը
էսասի թասսիհ իտէճէք վէ պու-
վասիթա իլէ գըրալըն հուգուգ վէ
թէէսիւրինի ուֆատաճագ տըր:
Պուստան մաստա՝ «Կիրիտ Եռ-
նանասթա պիրլէշիլ» իլան
իտէճէկինտէն վէ Կիրիտի մէ-
պուսլոր մէճլիսէ գապուլ օլընա-
ճաղընտան շիւքէ օլընիսօր: Իշ-
պու շիւքէտէն նաշի թիւրքիա
թէրթիպաթը ասքերիէտէ պու-
լունիսօր: վէ էկէր Կիրիտտէն
մէպուսլար կիտէր իսէ թիւրք օր-
տուսը Ենիսէն թէսալիայա հիւ-
ճիւ միտէճէկինի ճէրիտէլէր Եռ-
զիյօր: Թիւրք կազէթաճըլարը Կի-
րիտին Օսմանլը ասքերի թարա-
ֆընտան իշղալ օլընմասընը իտ-
տա իտէյօրլար:

Պապը Ալի իսէ Կիրիտ մէսէլէ-
սինտէն տօյալը Եռանաստատուն
իլէ Եռազընտա միւտարէպէյէ մէճ-
պուր օլաճաղընը տէրք ու ֆարգ
իթմիշ օլարագ, իքի տիւշման
իլէ իշի օլմասըն իշուս՝ Պուկարիս
իլէ տօսթըլը պէսլէմէկէ չալըշի-
յօր:

Թաւնիս տէյօրքի՝ պէօյիւք տէվ-
լէթլէր լաղըմ՝ զապլթ իթսինլէր
Սօֆիանըն վէ Աթինանըն հարպ-
ճուանէ հարէքեաթընը վէ գուլ-
վէթ վէրսինլէր թիւրքիանըն
սուլհէրվէր զալըլէթինէ:

Թաւալիլի Էֆքեաթ տէվլէթլէրէ
խիթապ տէյօրքի՝ Կիրիտ մէսէ-
լէսինտէ Եռ՝ թիւրքիանըն հու-
գուգընը ֆիլիէն (գործնականա-
պէս) թանըմալը վէ Եռաթա թիւր-
քիայը սէրպէսթ պըրագմալը
տըրլարքի՝ քէնտի էլի իլէ ատա-
լէթի իճրա իթսին:

Արնաւուտ վէ թիւրք մէօթէ-
պէրանը Իսքիւպտէ պիր մէճլիս
իտէրէք, արնաւուտ իսանը Եռ
մագ իշիւն նէ՝ հուրուֆաթ գուլ-
լանմագ խուսուսընտա միւղէքէրէ
իթթիլէր, վէ Եքէրիյէթլէ արապ
Եռաղըլարընը գուլլանմայա գա-
րար վէրտիլէր:

Սըրֆ Արնաւուտլար ալիտ օլան
պիր մէսէլէտէ թիւրքլէրին տա-
լի մէճլիսէ իշթիւրաք իթմէլէ-
րինտէն անլաշըլիյօր քի՝ Իս-
քիւպտէքի մէճլիս միւթաաուպ-
լպր մէճլիսի օլմուշ տըր:

Սեւանիքտէ 17նճի թապուր-
ըն պիր թաղըմ նէֆէրլէրի զա-
պլթին էմրինէ իթաաթ էթմէ:

Կիւլէր պաղըլարը տէ արնաւուտ-
լար իլէ պիրլէշտիլէր:

Էմրէ իթաաթ իթմէյէն աս-
քէրլէրին սիւհարը արնաւուտ օն-
լար Եռքանը հարպա չէքիլէճէք-
լէր:

—25000 րէտիֆ 4 հոհթա թաա-
լիւ իթմէք իշիւն սիւհալ ալթընա
ալընտըլար: Թաալիւ Սէւանիկ
Քէօրֆէշինէ Եռքան իճրա օլնա-
ճագ տըր:

Առքէրիյէ թէրթիպաթընա
տալիւրհաւաթիւթը Եռքագ կա
զէթալարա մէնն օլընտըր:

Ատանա վալիսի ճէմալ պէյ
մահուրին իսլամ վէ Էրմէնի ճէ-
մաաթլարընը պարըշտըրմագ ի-
շիւն Էքի միլլէթին մէօթէպէրա-
նընա պիր զիյոֆէթ վէրէճէկինի
վէ պու զիյոֆէթ Կաթիւղիսը
տուլի տալէթ էտէճէկինի մահէ-
լինտէն պիւթիւրիյօրլար:

Պիզէ պու կիպի զիւֆէթլէր:
վատլար վէ տհա ու Ենիսէլէր
Թիւրքլէր կիպի միւթէսիւպ վէ
ճահիլ Ենիսէլէ ֆալտէ իթմէք:
Կալկասիտա տալի պիր գաշ սէ-
նէ էվլէլ ալնը անտէլէր, Ենիսէ-
լէր վէճէօրիւշմէքլէր օլտըգտան
սօնրա՝ թէքըրա մուգաթէլէ տէ-
վամ իթթիլ թաքի Կալկասիա
Թիւրքլէրի սըրթլարընա Ենիսէլէ
գուլլէթընին վէ Բուս տաալէթի-
նին գըրպաճլարընը տուլանա
գառար:

Իէսմուլիմիզէ պինտէն Կաթիւղի-
կոս մէզըլէր զիւֆէթլէ կէթմէյէ-
ճէք իմիշ: վէ խոսթա տըր:

ԹՈՒՐԻՔԻԱ ՎԷ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Շու կիւնլէրտէ Թուրքիա վէ
Պուկարիա րէսմի սուրէթտէ տօ-
սթանն տուլուսարագ իքի տէվ-
լէթ պէյնինտէ թիճարէթ անտ-
նամէսինի Ենիսէլէք խուսուսըն-
տա իթթիւր Կուսուլա կէլէճէկի
թարաֆէյնտէն թէճմին օլընի-
յօր: Փագաթ էօթէտէ Սէւանիկ
ճինայէթ մահէմէսինտէն 8 կի-
շինին իտամա, 3 կիշինին Եպէտի
մահպուսիթի վէ տիկէր 10 կի-
շինինտէ Էնվաի ճէզալարա մահ-
քիւմ էտիլմէլէի՝ Պուկար Էֆ-
քեորը ումուսիյէի Ենիսէլէ հիտ-
տէթլէնտիւրմիշ տըր: Սօֆիա կա-
զէթալարը շէտիտ իսանլէ Փէօն
թիւրքիտարէսինի մաալէզէթի-
րէքտէ վէ Թուրքիայա գարշը՝
Պապան տէվլէթլէրի պէյնինտէ
պիր իթթիֆագ թէշքիլ իտիլի-
սինին իւզիւմինի կէօսթէրմէքտէ
տիւրլէր: Խուսուսի իլէ Վ. Բօշքա վէ
Տընէվլիկ կազէթալարը Թիւրք
տէվլէթիլն վիճուտինի Պապան
ճիւղարնտան գալտըմագ իշուս
Պուկարիայա թէշվիք իտէյօրլար:
Տընէվլիք սօն պիր նիւսիւսինտէ
տէյօր: «Թիւրքիանըն իտարէսի
թիւրքլէրին էլինտէ գալտըգճա
օ՝ միւթէրագը վէ հիւր օլմայո
ճագ տըր: Թիւրքիանըն Ենիսէ-
ճաղը չու տըր քի՝ գուլվէի աս-
քէրիսինի թանգիմ իտէճէք զայ-

ըր միւսիմ միլլէթլէրի տահա
զիյաաթ թէշվիք էթմէք իշիւն,
Թիւրքիանըն մահվիյէթի մու-
հագագ տըր: Սուլթանլարըն,
Բարըլմանըն վէ գօմիթէնին
զուլմը ալթընտա էզիլմէքտէ
օլան պիթիւն միլլէթլէր զուր-
թուլմալը տըր: Իշթէ իշ պու
տըր: Պուկարիո՝ միւթէրն օլ-
տըղը պիւթիւն գուլվէթլէրի
էթրաֆընա թօրաաարագ պու
գուրթարընը գալկալը սիւրմէլի
տըր:

Պուկարիանըն րէսմի վէ նիւ
րէսմիկազէթալարը չու կիւնլէր-
տէ Թիւրքիա իլէ խօշ կէշինմէք
էֆքեարըն իլէրի սիւրիյօրլար:

—Բուս Բաթրիհանէսինին իտ
տաաը խիւթընա օլարագ, պուլ-
կար Էքսարքէսանէսինին Սթան-
պօլտա գալմասընա վէ մայէթիւ-
տէ պիր պուկար Սինթը թէշ-
քիլ օլընմասընա Պապը Ալի րազի
օլմուշ վէ պու պապտա էվրագը
լաղըմէի Էքսարքէսանէյէ թէպիլի
իթմիշ տըր:

—Իգուսմըն պէյանընա պինա-
նէ պիր թաղըմ պուկար մէպուս-
լար Եռքան կիւնտէ Սթանպօլա
կիտէճէքլէր իմիշ:

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Թ Է

Պապան մէսէլէլէրինտէն տօ-
լալը Աստուրիա վէ Բուսիա պէյ-
նինտէ Ենիսէն պիր իթթիւրաֆ
հուսուլա կէթիւրմէք իշիւն միւ-
ղէքէրէ ճէրէան իթթիլի պիւթի.
րիլիյօր: Պու իթթիւրաֆ թիւրքլէ-
րին իշինէ Էքք կէլմէյօր: զիւրա
մագստ թիւրքլէրին իւզէրինէ
իճրաի թէսիւր իթմէքտէն իպա-
րէթ տըր: Թիւրքլէր իսէ մէք-
քիւր իքի տէվլէթին իթթիֆագ-
աղըլընտան իսթիֆատէ իթմէ-
կէ ալըշմը տըրլար:

—Պրանսա խարիճրէ նաղըրը
Մ. Բիշօն Շարգ մէսալիլինտէն
պահա իտէրէք, Եռանաստատունըն
գարըղըք անվալինտէն տօլալը
միւշքիւլաթ զուհուրա կէլտիկինի
վէ Սթանպօլ վէ Աթինա պէյնին-
տէ միւնասէպաթըն կէրկինլէշ-
տիկինի արզլէ, պու խուսուստա
պէօյիլկ տէվլէթլէրին միւղէքէ-
րէտէ պուլընտըգլարընը վէ
մագստլէրի իսէ իթթիֆագէն
Շարգ միւշքիլտընը հուլ իթ-
մէք օլտըղընը պէյոն էլլէտի:

—Բարիգտէն ալընան թէլէ-
կրաֆլարա նաղարէն, ոուլար էն-
մէյէ չպալաճը տըր:

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

Աղգալին, Բանասիրական, Գրական
Պատմական Կենսագրական Ամսաթիւրթ
Բաժնեգին տարեկան 10 ֆր.
Հասցէ՝ Խմբ. «Բազմալիկա»ի
Ս. Ղազար (Թաալիս) Վենետիկ



ԹԻԻՔԱՐԻՑԷ

ՋԱԽՐԻԷ

ՊՈՒԼՏԱԹ	Վազօն	100 քիւ.	19.	80.	20.	50
Արապա	15-80	լիպ.	Եօգ			
ԱՐԲԱ						

Վազօն	100 քիւ.	12.	70.	13
Արապա	45-52	լիպ.	Եօգ	
ԵՈՒԼԱՅ արապա	38-36	լիպ.	»	

»	100 քիւ.	11.	60/11.	80
ՋԱՎՏԱՐ	100 15.	30		11.
ՖԱՅՈՒԻԻԱ	100 քիւ.		22.	25

ՏԱՐԸ արապա			14.	
ԲՕԼՕՁ արապա	55-60	լիպ.	Եօգ	
ՄԻՍԻՐ	100 քիւ.		13.30	

Արապա			9.55	
Կիւնտէ վազօն	20-25	վէ	80-100	
արապա	կէլմէքտէ,			

ՈՒՆ № 00 (74 քիւ.)			22	50
» » 0			22.	50
» » 1			21.	50

» » 2			21.	
» » 3			20.	
» » 4			17.	

» » 5			15.	20
» » 6 (100 քիւ.)			13.	

ՊԱԿԱԼԻՑԷ

Վառնա Բեպասընտա պապալիյէ
մալլէրին պու կիւնլէր ֆիյաթը, ալթու
ֆանք իլէ:

ԳԱՂՎԷ	2.	15/3.	25
Շէֆէր նէմէք չուվալ			96.
Շէֆէր քէսմէլ սանտըպ	—49.		

ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը			47
» Ինկիլիլ			30.50
» Բիգօն			53.

» Ֆիլիպէ			46.
ԿԱՁ Սանտըրը			11.
Ջէթիւն Եռքը քիւ.	1.60—1.70		

ԳՈՒՐՈՒ Բազիւմ			60.770
Եռմուրթ 100 ատէթի			5. 80

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Ի ր ա ու լ յ ք ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ

Հետեւեալ գիրքերը:

ՂԱՐԻՊ ԱՍՊԷՐ	գին 1. ֆր
ԱՋԱՏ ԵՐԳԱՐԱՆ	» 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր	» 1.50 »
ԹԻԱՊԱՐՏ Բ.	» 2.50 »
ԿԱՐՄԻՐ ԵՄՈՒԹ	» 1.10 »
ԻՐԱԽՈՒՆԻԻ հաւաքածոյ մէկ տարուանը	12 ֆր.

Ա Ջ Գ

Աղգալին, Գրական Եւ Քաղաքական
հարցերով զբաղող այս միջամաւա-
շաթաթերթը կը հրատարակուի Ա-
մերիկայի Պոսթօն քաղաքին մէջ տա-
րեկան բաժնեգրին է 22 ֆր. կանխիկ
հասցէնէ Խմբագրութիւն «Աղգալագրոյ
18 Պաշ Սր, ՊՕՍԹՈՆ ՄԷՍ.

ՊԵ ԾԱԽՈՒՆ

Սիւզեմի ընտիր մեքենաներ
Գիւրամատչելի գնեքով: Ով որ
պէտք ունի թող գիմէ Իրաւունքի
խմբագրատունը:

Издатель: X Курбеганъ

Տպարան «Իրաւունք»—Վառնա